

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 2

ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստի

02.07.2014թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

Ա.Նալբանդյանը	- Կոմիտեի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ
Ա. Դարբինյանը	- Կոմիտեի անդամ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
Լ.Բերոյանը	- Կոմիտեի քարտուղար, մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետ
Ա.Սահակյանը	- Կոմիտեի անդամ, մարզպետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի պետ
Մ.Սայադյանը	- մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
Ա.Ծատինյանը	- «Ալավերդու թիվ 11 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Ա.Ռամազյանը	- «Թումանյանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Հ.Ադամյանը	- «Հաղպատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Է.Խաչատրյանը	- «Ճոճկանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Տ.Հովսեփյանը	- «Վանաձորի թիվ 23 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Ս.Ճաղարյանը	- «Վանաձորի թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Մ.Խարազյանը	- «Վանաձորի թիվ 26 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Գ.Քարհանյանը	- «Վանաձորի թիվ 27 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
Ա.Բրուտյանը	- «Վանաձորի թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. «ՀՀ Լոռու մարզի Ալավերդու թիվ 11 միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Թումանյանի միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Հաղպատի միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Ճոճկանի միջնակարգ դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 23 հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 25 հիմնական դպրոց», ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 26 հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 27 հիմնական դպրոց», «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 28 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներում իրականացված ներքին աուդիտի աշխատանքների արդյունքների՝ աուդիտորական հաշվետվությունների և եզրակացությունների քննարկում:

Կոմիտեի նախագահի առաջարկությամբ քվեարկության դրվեց արձանագրված խախտումների և թերությունների վերացման և դրանց հետ կապված տնօրեններին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Բաց քվեարկությամբ 3 կողմ, 0 դեմ և 0 ձևոնյալի ձայներով՝

Որոշվեց.

1. Աշխատանքում ունեցած լուրջ թերությունների, խախտումների համար առաջարկել ՀՀ Լոռու մարզպետին «ՀՀ Լոռու մարզի Վանաձորի թիվ 25 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի

գործադիր տնօրեն՝ Ս.Ճաղարյանի և «ՀՀ Լոռու մարզի Հաղպատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն՝ Հ.Ադամյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Քննարկման մասնակից բոլոր ՊՈԱԿ-ների տնօրեններին գրավոր հանձնարարել 10-օրյա ժամկետում վերացնել արձանագրված թերությունները և խախտումները: Արդյունքների մասին գրավոր տեղյակ պահել մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժին:

ԿՈՄԻՏԵ



Ռ. Չառչ

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

Արձ. Լ.Բերոյանը
Հեռ. / 0322/43447